

## Ա Զ Դ

Բանալով «Մուրճի»-ի 1905 թուականի բաժանորդագրութիւնը՝ ամսագիրս մտնում է իր նոր շրջանի հինգերորդ տարին,

Զորս տարուայ գործունէութեան արդիւնքը՝ 48 մեծագիր հատորները՝ դրուած են մեր ընթերցող հասարակութեան առաջ, և նրա այն մասը, որ իրան նեղութիւն է տալիս՝ նախ ճանաչել մի բան, ուշադրութեան առնել բոլոր հանգամանքները և ապա միայն կարծիք յայտնել, — անշուշտ պէտք է նկատած լինի որ մենք աշխատել ենք մեր հանդիսի միջոցավ ընթերցողին գիտակ դարձնել հայ ժողովրդի եւ նրա ցիրուցան հատուածների նկատմամբ, տեղեակ պահել նրան պետական-հասարակական կեանքում տեղի ունեցող երեսյթների մասին և նրա մտքի տուաջ պատուան բանալ համամարդկային կեանքի, գրականութեան, գիտովնեան եւ գեղարուեստի էվոլիցիան դիմելու համար:

Մանրամասնութիւնների մէջ չմտնելով, մենք կարոք ենք ասել մեր ուղղութեան մասին որ մենք աշխատել ենք իւրաքանչիւր հարցում վնասել ծշմարտիկինը, անկախ որևէ կողմէնակի միտումներից և շահերից: Անհատների և ազգերի յարաբերութիւնների ինդրում մենք լեկավարուել ենք լիակատար արդարութեան պահանջներով: Եւ օրէնքով անծի, պատուի եւ աշխատանքի համահաւասար ապահովութիւնը համարում ենք հասարակական կանոնաւոր զարգացման վիմաքար:

Մենք աշխատել ենք համախմբել «Մուրճ»-ի շուրջը մեր գրական ոյժերը, միջոց տալ արտայայտուել իւրաքանչիւրին, ով նոր միտք և անկեղծ զգացմունք ունի: Խմբագրութիւնս նոյն ուղղութեամբ շարունակելու է իր գոծնէութիւնը և ապագայում, եթէ միայն հայ՝ հասարակութեան անկուլ'տուրական և անհոգ վերաբերմունքը նիւթական անյաղթելի թումբեր չըկանզնեցնի մեր առջև: Իւրաքանչիւր լուրջ ընթերցող պէտք է մտածի որ ամենմի բարուոքում այս հրատարակութեան թէ արտաքին և թէ ներքին կողմից կապուած է գլխաւորապէս բաժանորդագրութիւնից, իսկ մեզանու կրիայի քայլերով է աճում վճարող ընթերցողների թիւը. 1900-ին (Հին Շրջան) էր 245, 1901-ին (Նոր Շրջան) դառաւ 657, 1902-ին—658, 1903-ին 780, 1904-ին 896: Ուրեմն, չորս տարուց յետոյ նա այժմ հազիւ է հասնում 900-ի, մինչդեռ (պահպանելով որոշ ծաւալը և հոնորարի սկզբունքը) առանց խմբագրողի աշխատանքի վարձատրութեան մասին մտածելու անդամ—պէտք էր առնուազն 1000, իսկ խմբագրողի վարձատրութեամբ հանդերձ 1200 տարեկան բաժանորդ ամսագրիս անդիֆիցիտ հրատարակութեն համար: